AraratBank
բարձրանում ենք միասին
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Ընդհանուր ակտիվները մեկ տարվա ընթացքում աճել են 12.9%-ով և կազմել 403,496 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.4%:
- Ընդհանուր պարտավորությունները 2022թ.-ի համեմատ աճել են 12.8%-ով և կազմել 344,192 մլն ՀՀ դրամ, իսկ 2013թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 12.5%:
- Հաճախորդներին տրված վարկերը հաշվետու տարում ավելացել են 20.5%-ով և կազմել 200,539 մլն ՀՀ դրամ, իսկ միջին աճի տեմպը վերջին տասը տարիների համար կազմել է 12.9%:
- Արժեթղթերում ներդրումներն աճել են 5.0%-ով և կազմել 54,086 մլն ՀՀ դրամ: 2013թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 15.0%:
- Բանկի կողմից ներգրավված ժամկետային ավանդները աճել են 27.6%-ով և կազմել 111,832 մլն ՀՀ դրամ, իսկ 2013թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 16.3%: Միայն ֆիզիկական անձանց միջոցները մեկ տարում աճել են 34.3%-ով: Ցպահանջ հաշիվների մնացորդները աճել են 15.6%-ով և կազմել 163,861 մլն ՀՀ դրամ, որտեղ ֆիզիկական անձանց մասնաբաժինը կազմել է 47.1%, իսկ իրավաբանական անձանցը՝ 52.9%:
- Բանկի զուտ տոկոսային մարժան 2022թ.-ի համեմատ աճել է 0.7 տոկոսային կետով և կազմել 4.5%:
- Բանկի զուտ շահույթը կազմել է 10,826 մլն ՀՀ դրամ:
- Բանկի ընդհանուր կապիտալը 2022թ.-ի համեմատ աճել է 13.0%-ով և կազմել 59,304 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 11.7%:
- 2023 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկել է թվով 50 մասնաճյուղ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ԹՎԵՐՈՎ



ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի հարգելի՛ բաժնետերեր, գործընկերներ և հաճախորդներ,
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի գործունեության 32-րդ տարին նշանակալից էր ապագային միտված հիմնարար գերծընթացների ներդրմամբ: Մենք համարձակ քայլերով գնացել ենք նորարական գաղափարների հետևից: Մշակել ենք Բանկի Թվային զարգացման քաղաքականությունը, Կորպորատիվ կառավարման քաղաքականությունը, փուլ առ փուլ զարգացրել ենք հաճախորդների հեռավար սպասարկման համակարգը, օպտիմալացրել ենք Բանկի բիզնես գործընթացները, իրականացրել ենք արտաքին և ներքին միջավայրներից եկող ռիսկերի հավասարկշռված կառավարում, բարձրացրել ենք թվային տեխնոլոգիաների և բանկային ծառայությունների մատուցման որակը: Շարունակական քայլեր են կատարվել անձնակազմի ուսուցման և զարգացման ուղղությամբ: Բանկը շարունակել է հավատարիմ մնալ իր որդեգրած ռազմավարությանը և հաստատակամ քայլերով շարժվել առաջ: Լինելով ազգային բանկ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր ներդրումն է ունեցել ՀՀ տնտեսությունում, ինչի արդյունքում 2023թ.-ի տարեվերջին հաճախորդներին տրված վարկերի մնացորդը կազմել է 200,539 մլն ՀՀ դրամ: 2022թ.-ի համեմատ ցուցանիշը աճել է 20.5%-ով: Բանկը հավատարիմ է մնացել Կորպորատիվ կառավարման սկզբունքերին, պրոֆեսիոնալ կառավարման արդյունքում Բանկն ընդլայնել է միջազգային համագործակցության ցանցը, ինչը հավաստվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի ու Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի (EFSE) միջև կնքված 5 մլն ԱՄՆ դոլարի միջոցների ներգրավման պայմանագրով, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի և «GGF Southwest Europe B.V.» միջև կնքված 5 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագրով, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի կողմից «NASIRA» ծրագրի շրջանակներում կնքված երաշխիքի սահմանաչափը ևս 10 մլն ԱՄՆ դոլարով ավելացմամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

2023թ.-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն արժանացել է AMX ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ «Կորպորատիվ պարտատոմսերի լավագույն տեղաբաշխող բորսայի կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման համակարգում» մրցանակին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն արժանացել է նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «ՎԶԵԲ-ի կարևոր գործընկեր» (Valued Partner of EBRD) մրցանակին՝ ՎԶԵԲ-ի և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի միջև երկարատև և արդյունավետ համագործակցության համար:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն երրորդ տարին անընդմեջ Global Finance միջազգային հեղինակավոր ամսագրի մասնագիտական թիմի կողմից ճանաչվել է Հայաստանի «Լավագույն ենթապահառու բանկ»:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը բրիտանական The Global Banking & Finance Review հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է «Լավագույն ԿՍՊ բանկ Հայաստանում»:

2023թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 403,497 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 12.9%-ով կամ 46.0 մլրդ ՀՀ դրամով:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը, շարժվելով կորպորատիվ կառավարման սկզբունքներով, միշտ առաջնահերթություն է համարել ներդրողների, բաժնետերերի և հաճախորդների շահերը, որի արդյունքում 2023թ.-ին Բանկի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 31,657 ՀՀ դրամ՝ 2022թ.-ի 28,014 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ աճելով 13.0%-ով:

Թեև անցած տարին ընձեռեց նոր հնարավորություններ հայրենական ֆինանսական շուկայի համար, միևնույն ժամանակ արտաքին ճնշումներն ու անկայունությունը շարունակեցին մարտահրավերներ նետել: Այս պայմաններում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը կարողացավ հավուր պատշաճի դիմակայել մարտահրավերներին:

Լիահույս եմ, որ չնայած խնդիրներին կարողացել ենք կենտրոնում պահել հաճախորդի և ներդրողների շահերը:

Արհեստավարժ և նվիրված թիմով, գործընկերների և հաճախորդների մեծ բանակով մենք այսօր վստահությամբ ենք նայում բանկի ապագային և հանձնառու ենք մեր հաճախորդների բարեկեցությանը ու մեր Հայրենիքի բարգավաճմանը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

«Կայուն գործելաոճ՝ անկայուն պայմաններում» խորագիրը թեև համառոտ, բայց ներկայացնում է ԱրարատԲանկի հիմնական մոտեցումը սեփական գործելակերպին, այն է՝ ցուցաբերել կայունություն և հստակ ռազմավարություն անկայուն տնտեսական և աշխարհաքաղաքական պայմաններում:

Ուրախությամբ պետք է փաստեմ, որ Բանկը բարձր ցուցանիշներով է ամփոփել ֆինանսական տարին՝ հաղթահարելով ընթացիկ մարտահրավերները, այդ թվում՝ ներելով պատերազմի հետևանքով Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների վարկային պարտավորությունները և իրականացնելով նաև աջակցության տարաբնույթ ծրագրեր:

Կարևոր եմ համարում նշել, որ 2023թ.-ին միջազգային ֆինանսական հաստատություններից նոր միջոցների ներգրավումը խոսում է բանկի կայուն ռազմավարության, վստահելիության և արդյունավետ կառավարման մասին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Մասնավորապես՝

- 5 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիրը ՀԵԵՀ-ի հետ կնպաստի ՄՓՄՁ-ների ֆինանսավորմանը, ինչը կարևոր է տնտեսության այս հատվածի զարգացման համար:
- 5 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցները GGF-ից կօգնեն խթանել կանաչ ֆինանսավորումը Հայաստանում, ինչը համահունչ է բանկի կայուն զարգացման ռազմավարությանը:
- «NASIRA» ծրագրի շրջանակում կնքված 10 մլն ԱՄՆ դոլարի նոր երաշխիքը թույլ կտա ընդլայնել վարկավորումը նախընտրելի խմբերի համար:

Այս նոր ֆինանսական հոսքերը վկայում են նաև, որ ԱրարատԲանկն արժանացել է միջազգային գործընկերների վստահությանը և կարողացել է դիմակայել ֆինանսական մարտահրավերներին՝ շարունակելով իր գործունեությունը և զարգացումը: Ներգրավված ֆինանսական միջոցները թույլ կտան բանկին ավելի լայն հնարավորություններ ընձեռել իր հաճախորդներին:

2023թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 403,497 մլն ՀՀ դրամ, իսկ 2023թ.-ի տարեվերջի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի մնացորդը կազմել է 200,539 մլն ՀՀ դրամ:

2023թ.-ին Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 49.7%-ը, նախորդ տարվա 46.6%-ի դիմաց, ինչը պայմանավորված է վարկավորման բավականին բարձր տեմպերի հետ:

2023թ.-ի ընթացքում ԱրարատԲանկն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց իրականացնել ակտիվ գործունեություն արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ, իսկ 2023թ.-ի վերջի դրությամբ Բանկի ներդրումային արժեթղթերի պորտֆելը կազմել է 54,086 մլն ՀՀ դրամ՝ 2022թ.-ի համեմատ աճելով 5.0%-ով կամ 2,628 մլն ՀՀ դրամով:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

2023թ.-ի վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 59,304 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 6,825 մլն ՀՀ դրամով կամ 13.0%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է շահաբաժինների վճարում: Ընդհանուր կապիտալի ցուցանիշի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 2023թ.-ի տարեկան գործունեության արդյունքում գեներացված 10,825.6 մլն ՀՀ դրամ զուտ շահույթով:

2023թ.-ին ևս ԱրարատԲանկը շարունակել է դիրքավորվել որպես սոցիալապես պատասխանատու կառույց՝ վերհանելով, հասցեագրելով և լուծելով հասարակությունում առկա խնդիրները՝ միաժամանակ պահպանելով կրթությունը որպես հիմնական ուղղություն և շարունակելով իրականացնել նաև բնապահպանական և առողջապահական ծրագրեր: Ի թիվս բազում սոցիալական ծրագրերի՝ Արցախից բռնի տեղահանված հայրենակիցների համար բարեկեցիկ ու արժանապատիվ կյանք ապահովելու նպատակով՝ 2023թ.-ին ԱրարատԲանկը որոշում է կայացրել միանալ «Հիմք» աջակցման հիմնադրամին: Բանկի կողմից իրականացված և իրականացվող սոցիալական ծրագրերի արդյունավետության մասին խոսում է նաև այն, որ ԱրարատԲանկը բրիտանական The Global Banking & Finance Review հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է «Լավագույն ԿՍՊ բանկ Հայաստանում»:

Ամփոփելով խոսքս՝ պետք է նշեմ, որ 2023թ.-ին, չնայած բազմաթիվ տնտեսական և աշխարհաքաղաքական մարտահրավերներին, ԱրարատԲանկը շարունակեց կայուն զարգանալ՝ ապահովելով ակտիվների, վարկային պորտֆելի, կապիտալի և եկամուտների աճ, ինչպես նաև ընդլայնելով համագործակցությունը միջազգային գործընկերների հետ:

2023թ.-ին մենք գործել ենք՝ հիմքում ունենալով ճկուն գործելաոճ փոփոխվող միջավայրին արագ արձագանքելու համար, պահպանելով ռիսկերի պատշաճ կառավարումն ու հաճախորդների վստահությունը, կենտրոնանալով բանկի հիմնական ուժեղ կողմերի և ռազմավարական նպատակների վրա, արդյունավետորեն օգտագործելով թվային, ներդրումային տեխնոլոգիաներն ու նորարարությունները, խթանելով թիմային աշխատանքը և ցուցաբերելով պատասխանատվություն հասարակության և շրջակա միջավայրի նկատմամբ:

2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի ու Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի (ՀԵԵՀ) միջև կնքվել է 5 մլն ԱՄՆ դոլարի միջոցների ներգրավման պայմանագիր՝ ՄՓՄՁ-ներին աջակցելու համար:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը 5 մլն ԱՄՆ դոլար է ներգրավել GGF-ից՝ Հայաստանում կանաչ ֆինանսավորումը խթանելու համար:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը, ամբողջությամբ սպառելով «NASIRA» ծրագրի շրջանակներում կնքված երաշխիքի սահմանաչափը, այն ևս 10մլն ԱՄՆ դոլարով ավելացնելու նոր պայմանագիր է կնքել՝ շարունակելով վարկավորել նախապես ընտրված հաճախորդների թիրախային խմբերին:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը AMX ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ լավագույնն է ճանաչվել «Կորպորատիվ պարտատոմսերի լավագույն տեղաբաշխող բորսայի կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման համակարգում» անվանակարգում՝ հիմնվելով տարեկան արդյունքների վրա:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն արժանացել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «ՎԶԵԲ-ի կարևոր գործընկեր» (Valued Partner of EBRD) մրցանակին՝ ՎԶԵԲ-ի և ԱրարատԲանկի միջև երկարատև և արդյունավետ համագործակցության համար:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն երրորդ տարին անընդմեջ Global Finance միջազգային հեղինակավոր ամսագրի մասնագիտական թիմի կողմից ճանաչվել է Հայաստանի «Լավագույն ենթապահառու բանկ»:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը բրիտանական The Global Banking & Finance Review հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է «Լավագույն ԿՍՊ բանկ Հայաստանում»:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԱԿՏԻՎՆԵՐ

2023թ. ՀՀ տնտեսության և ֆինանսական համակարգի համար կրկին բարձր աճի տեմպերի տարի էր: Առաջին կիսամյակի ընթացքում ամբողջությամբ հաղթահարվեց նախորդ տարիների բարձր գնաճային միջավայրը՝ զուգորդվելով բարձր տնտեսական աճի ցուցանիշներով: Դեպի Հայաստան կապիտալի ներհոսքը և առևտրաշրջանառության ծավալները ևս պահպանվեցին բարձր մակարդակների վրա: Արդյունքում ֆինանսական համակարգում պահպանվեցին շահութաբերության և ներդրումների աճի բարձր ցուցանիշները: Դրական զարգացումներին զուգահեռ բանկային համակարգի ռիսկերի կլանման հնարավորությունը ևս պահպանվել է բարձր մակարդակում, ինչը հնարավոր է դարձել կապիտալի համարժեքության և իրացվելիության բարձիկների շնորհիվ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի համար տարին բարենպաստ էր նաև սահմանված թիրախային ցուցանիշներին հասնելու տեսանկյունից:

2023թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 403,497 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 12.9%-ով կամ 46.0 մլրդ ՀՀ դրամով: Բանկի ակտիվների վերջին տասը տարիների միջին աճի տեմպը կազմել է 12.4%:

Ընդհանուր ակտիվներ, մլն. ՀՀ դրամ



Ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 86.2%

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31.12.2023



31.12.2022



- Հաճախորդներին տրված վարկեր
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Ներդրումային արժեթղթեր
- Այլ ակտիվներ
- Դրամական միջոցներ
- Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2023Թ.-Ի ԵՎ 2022Թ.-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

(մլն ՀՀ դրամ)

	2023	2022	Փոփոխություն	%
Ակտիվներ, այդ թվում՝	**403,496**	**357,510**	**45,986**	**12.86%**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**347,959**	**259,109**	**88,849**	**34.29%**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	200,539	166,446	34,094	20.48%
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	93,334	41,205	52,128	126.51%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	45,258	42,427	2,831	6.67%
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,828	9,032	-203	-2.25%
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	**86.24%**	**72.48%**		

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31.12.2023



31.12.2022



- Հաճախորդներին տրված վարկեր
- Ներդրումային արժեթղթեր
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հաճախորդներին տրված վարկերը 2022թ.-ի համեմատ գերակատարվել են 20.5%-ով, իսկ Պահանջները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ գերակատարվել են 126.5%-ով՝ նախորդ տարվա համեմատ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ավելացել է՝ կազմելով 86.2% նախորդ տարվա 72.5 %-ի դիմաց:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՎԱՐԿԵՐ

2023թ.-ի ընթացքում Բանկին հաջողվեց վարկային պորտֆելի զգալի աճ ապահովել՝ հավատարիմ մնալով իր առաջնահերթություններին:
Այս ուղղությամբ 2023թ.-ին իրականացված գործընթացները ներկայացված են ստորև.

- Բանկի և FMO նիդերլանդական զարգացման բանկի միջև դեռևս 2021թ.-ի կնքված «NASIRA» ծրագրի շրջանակներում ստացված 10 մլն ԱՄՆ դոլար երաշխիքի սահմանաչափը, որը նախատեսված էր սպառել 3 տարվա ընթացքում, արդյունավետ աշխատանքի արդյունքում հաջողվեց ամբողջությամբ սպառել շուրջ 1.5 տարում: 2023թ. ապրիլ ամսին կնքվել է սահմանաչափի ևս 10 մլն ԱՄՆ դոլարով համալրման նոր պայմանագիր, որը հնարավորություն է տվել ոչ միայն մեծացնել համապատասխան վարկերի կշիռները ՓՄՁ և Ագրո վարկավորման պորտֆելներում, այլ նաև մեկ վարկառուի գծով առավելագույն վարկի չափը կրկնապատկել՝ սահմանվելով 200,000 ԱՄՆ դոլար:
- 2023թ.-ին իր լիարժեք աշխատանքները սկսեց նոր ձևավորված լիզինգային գործառնությունների բաժինը: Գործունեության ակտիվ մեկնարկով Բանկին հաջողվեց հասնել տարվա ընթացքում իր առջև դրված նպատակային ցուցանիշներին:
- 2023թ.-ին ընդլայնվել է համագործակցությունը տարբեր կառուցապատողների հետ, և հաճախորդների համար ձևավորվել են նոր առաջարկներ առաջնային շուկայից բնակարանների ձեռքբերման ֆինանսավորման նպատակով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՎԱՐԿԵՐ

2023թ.-ի տարեվերջի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի մնացորդը կազմել է 200,539 մլն ՀՀ դրամ: 2022թ.-ի համեմատ ցուցանիշի ավելացումը կազմել է 20.5% կամ 34,094 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.9%:
2023թ.-ին Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 49.7%-ը, նախորդ տարվա 46.6%-ի դիմաց, ինչը պայմանավորված է վարկավորման բավականին բարձր տեմպերի հետ:

Հաճախորդներին տրված վարկեր, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բանկի կողմից տրամադրված վարկերում հիփոթեքային վարկերի ծավալը՝ 2023թ.-ի տարեվերջի դրությամբ կազմել է 30,708 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 26,652 մլն ՀՀ դրամի դիմաց, աճը՝ 15.2%: Բանկի կողմից տրամադրված գրավով ապահովված սպառողական վարկերը 2022թ.-ի համեմատ աճել են 12,728 մլն ՀՀ դրամով կամ 39.2%-ով և 2023թ.-ի վերջի դրությամբ կազմել են 45,236 մլն ՀՀ դրամ: 2023թ.-ին աճել են նաև գյուղատնտեսական վարկերը և այլ սպառողական վարկերը (15.0% և 89.6 %), սակայն նվազել են ոսկու գրավով և անգրավ սպառողական վարկերը՝ համապատասխանաբար 1.0%, 2.7%-ով: Կորպորատիվ հաճախորդների վարկավորման ծավալները հաշվետու տարվա ավարտին կազմել են 104,784 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 16.7%-ով:

Տրամադրված վարկերի կառուցվածք 31.12.2023



Տրամադրված վարկերի կառուցվածք 31.12.2022



- Այլ սպառողական վարկեր
- Սպառողական վարկեր անշարժ գույքի գրավով
- Հիփոթեքային վարկեր
- Ոսկու գրավով վարկեր
- Անգրավ սպառողական վարկեր
- Գյուղատնտեսական վարկեր
- Վարկեր կորպորատիվ հաճախորդներին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2023թ.-ի վերջի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռը 2022թ.-ի համեմատ չնչին փոփոխվել է, իսկ ֆիզիկական անձանց վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 1.2%-ով և կազմել 48.5%:

31.12.2023



31.12.2022



- Իրավաբանական անձինք
- Ֆիզիկական անձինք

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

2023թ.-ի ընթացքում ԱրարատԲանկն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց իրականացնել ակտիվ գործունեություն արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:
2023թ.-ի վերջի դրությամբ Բանկի ներդրումային արժեթղթերի պորտֆելը կազմել է 54,086 մլն ՀՀ դրամ: 2022թ.-ի համեմատ ցուցանիշը աճել է 5.0%-ով կամ 2,628 մլն ՀՀ դրամով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 15.0%:

Ներդրումային արժեթղթեր, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

Ներդրումային պորտֆելում ՀՀ պետական պարտատոմսերի տեսակարար կշիռն ավելացել է 3.8%-ով և կազմել՝ 68.3%:

31.12.2023



31.12.2022



ՀՀ պետական պարտատոմսեր

Ոչ պետական պարտատոմսեր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ.-ի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 344,192 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.8%-ով կամ 39,161 մլն ՀՀ դրամով:

Ընդհանուր պարտավորություններ, մլն. ՀՀ դրամ



Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդների ժամկետային ավանդների և ցպահանջ միջոցների ավելացմամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄՆԵՐ

Տարեվերջին Բանկի կողմից Միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 37,294 մլն ՀՀ դրամ կամ պարտավորությունների 10.8%-ը: 2022թ.-ի համեմատ ներգրավված միջոցները նվազել են 18.1%-ով: Վերոնշյալը միջազգային շուկաներում տոկոսադրույքների բարձր մակարդակի արդյունք է: Այնուամենայնիվ, Բանկը 2023թ.-ի ընթացքում երկու գործընկերոջ հետ կնքել է նոր պայմանագրեր ընդհանուր առմամբ 10 մլն ԱՄՆ դոլարի չափով միջոցների ներգրավման նպատակով: Բանկն ակտիվորեն շարունակել է համագործակցությունը մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Նիդերլանդների զարգացման բանկ (FMO), DEUTSCHE INVESTITIONS UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպություն (DEG), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ (EFSE), Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (BSTDB), Incofin Investment Management, Blue Orchard, Եվրասիական զարգացման բանկ (EDB), SYMBIOTICS SICAV ընկերություն և այլ ֆինանսական կազմակերպություններ:

Միջազգային ներգրավումներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31.12.2023



31.12.2022



- Միջազգային և այլ ֆին.կազմ. ստացված միջոցներ
- Պարտավորություններ բանկերի նկատմամբ
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ միջոցներ
- Բանկի կողմից թողարկված արժեթղթեր
- Ստորադաս փոխառություն
- Ժամկետային ավանդներ
- Այլ պարտավորություններ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Ժամկետային ավանդները հաշվետու տարվա ավարտին կազմել են 111,832 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 32.5%-ը և 2022թ.-ի համեմատ ավելացել են 27.6%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 16.3%: Մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն աճել են 34.3%, իսկ իրավաբանական անձանց ավանդները գրեթե մնացել են անփոփոխ:

Ժամկետային ավանդներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31.12.2023



31.12.2022



իրավաբանական անձինք

ֆիզիկական անձինք

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ՑՊԱՀԱՆՋ ՄԻՋՈՑՆԵՐ

Բանկի ընթացիկ հաշիվներն ու ցպահանջ միջոցները հաշվետու տարվա ավարտին կազմել են 163,861 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 47.6%-ը: 2022թ.-ի համեմատ ցուցանիշն ավելացել է 15.6%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 14.4%: Իրավաբանական անձանց միջոցների տեսակարար կշիռը կազմել է 52.9%, իսկ ֆիզիկական անձանց միջոցների տեսակարար կշիռը՝ 47.1%:

Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ միջոցներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2023թ.-ի վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 59,304 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 6,825 մլն ՀՀ դրամով կամ 13.0%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է շահաբաժինների վճարում: Ընդհանուր կապիտալի ցուցանիշի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 2023թ.-ի տարեկան գործունեության արդյունքում գեներացված 10,825.6 մլն ՀՀ դրամ զուտ շահույթով: Կապիտալի վրա դրական ազդեցություն է ունեցել նաև արժեթղթերի վերագնահատման պահուստների փոփոխությունը:

Ընդհանուր կապիտալ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 9,366,725 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի Կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,873,375 սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: 2023թ.-ի ընդհանուր կապիտալի փոփոխության արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 31,657 ՀՀ դրամ՝ 2022թ.-ի 28,014 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ աճելով 13.0%-ով:

Բանկի բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի դինամիկան, ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 28,723 մլն ՀՀ դրամ՝ ավելանալով 23.3%-ով կամ 5,421 մլն ՀՀ դրամով:
Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է Հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների 2,964 մլն ՀՀ դրամ կամ 16.5% աճով, որը կազմել է ընդհանուր տոկոսային եկամուտների 73.0%-ը՝ նախորդ տարվա 77.3%-ի դիմաց:
Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքում բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 5.8% նախորդ տարվա 2.3%-ի փոխարեն՝ արդյունքում գեներացնելով 1,674 մլն ՀՀ դրամի եկամուտ:
Ներդրումային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 15.8%-ով և կազմել 4,811 մլն ՀՀ դրամ, իսկ դրանց մասնաբաժինը ընդհանուր տոկոսային եկամուտների մեջ կազմել է 16.7%՝ նախորդ տարվա 17.8%-ի փոխարեն:
Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքը բերված է ստորև.

31.12.2023



31.12.2022



- Հաճախորդներին տրված վարկերից
- Արժեթղթերի պորտֆելից
- Բանկերում և այլ ֆին . կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից
- Ռեպո պայմանագրերից
- Այլ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 11,891 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.0%-ով կամ 233 մլն ՀՀ դրամով:

Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց կատարված ծախսերը 2023թ.-ին կազմել են 7,274 մլն ՀՀ դրամ, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային ծախսերում կազմել է 61.2%: 2022թ. համեմատ ծախսերն ավելացել են 27.7%-ով, ինչն օրինաչափ է պորտֆելների աճին զուգահեռ:

2022թ.-ի համեմատ նվազել է Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից նեգրավված ավանդների և այլ փոխառու միջոցների գծով ծախսերի տեսակարար կշիռը՝ 36.1%-ի դիմաց կազմելով 32.5%: Նշված ծախսերը կրճատվել են 8.1%-ով կամ 342 մլն ՀՀ դրամով, ինչը հիմնականում պորտֆելի նվազման արդյունքն է:

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերը կազմել են 275 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից պակաս լինելով 22.8%-ով:

2023թ.-ին Բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 16,832 մլն ՀՀ դրամ՝ 2022թ. համեմատ ավելանալով 5,188 մլն ՀՀ դրամով կամ 44.6%-ով:

Բանկի զուտ տոկոսային մարժան 2022թ.-ի համեմատ ավելացել է 0.7 տոկոսային կետով և կազմել 4.5%:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

31.12.2023



- Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց
- Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց
- Բանկերից և այլ ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց
- Ռեպո պայմանագրերի դիմաց
- Ստորադաս փոխառության դիմաց
- Այլ ներգրավված միջոցներ

31.12.2022



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են մոտ 5,083 մլն ՀՀ դրամ՝ 2022թ.-ի համեմատ աճելով 16.2%-ով կամ մոտ 710 մլն ՀՀ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 2,199 մլն ՀՀ դրամ՝ 2022թ.-ի համեմատ աճելով 33.2%-ով կամ 548 մլն ՀՀ դրամով:

Արդյունքում 2023թ.-ին Բանկի զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 2,884 մլն ՀՀ դրամ՝ ավել լինելով 2022թ.-ի համապատասխան ցուցանիշից 162 մլն ՀՀ դրամով կամ 6.0%-ով: 2022թ.-ի համեմատ աճել են հիմնականում վճարահաշվարկային և վճարային քարտերով գործառնություններից միջնորդավճարները:

2023թ.-ի ընթացքում Բանկն արտարժութային գործառնություններից գեներացրել է 5,299 մլն ՀՀ դրամի զուտ եկամուտ: 2022թ.-ի համապատասխան ցուցանիշից եկամուտները նվազել են 3,621 մլն ՀՀ դրամով կամ 40.6%-ով :

Բանկի ընդհանուր վարչական ծախսերը կազմել են 10,619 մլն ՀՀ դրամ 2022թ.-ի 8,856 մլն ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշի 19.9% տարբերությունը պայմանավորված է անձնակազմի պահպանման համար իրականացված ծախսերի աճով, որը 2022թ.-ի համեմատ ավելացել է 1,829 մլն ՀՀ դրամով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2023թ.-ին Բանկի զուտ շահույթը կազմել է 10,826 մլն ՀՀ դրամ:

Բանկի զուտ շահույթ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ստորև բերված են Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները:

Բանկի շահութաբերության գործակիցներ



Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 5,779 ՀՀ դրամ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2023թ.-ին Բանկի ռազմավարական առաջնահերթություն համարվող թվային բանկային համակարգը ապահովեց իր շարունակական զարգացումը: Ուշադրության կենտրոնում էր մասնավորապես AraratMobile բջջային հավելվածի կատարելագործումը: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումներն ու ձեռք բերված հաջողությունները ներկայացված են ստորև:

- Trusted Device անվտանգության համակարգի ներդնում
- Նոր ֆունկցիոնալների ներդնում՝
  - Master թվային քարտեր պատվիրելու հնարավորություն ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների համար,
  - այլ բանկի վարկի մարում (ստուգման ավելացում),
  - աղբահանության վճարումներ,
  - հայտով վնասված քարտերի փոխարինում,
  - հայտով Swift փոխանցումներ,
  - չհաշվանցված քարտային գործարքներն ու անդորագրերը դիտելու հնարավորություն, ծախսերի կառավարում
- Անհպում վճարումների հնարավորության ավելացում՝ Issuer’s Wallet
- Հաշիվների բացում ոչ ռեզիդենտ հաճախորդների համար
- MoneySend միջազգային փոխանցումներ
- Թվային բանկինգի կառավարման համակարգում գործարքների սահմանաչափերի կառավարման և կրկնակի հաստատման մեխանիզմների ներդնում, լրացուցիչ ծառայություններ
- AraratMobile հավելվածի օգտատերերի թվի զգալի աճ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ.-ին Բանկը, որպես ներդրումային ծառայությունների մատուցման շուկայի առաջատարներից մեկը, շարունակեց ուշադրության կենտրոնում պահել Ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտը և մեխանիզմներ կիրառեց մատուցվող ծառայությունների (պահառություն, բրոքերիջ, տեղաբաշխում, արժեթղթերով գործարքների հետ կապված վերլուծությունների կազմում, հրապարակում) որակի բարելավման նպատակով: Ստորև բերված են այս ուղղությամբ իրականացված միջոցառումները.

- ARARATBANK Trading Platform (ATP) հարթակում իրականացվող գործարքների ավտոմատ մուտքագրումը Բանկի ներքին հաշվառման համակարգ,
- ArarartBank Trading տելեգրամյան ալիքում ֆինանսական նորությունների հրապարակում, իսկ միջազգային շուկաներում առևտրային գործառնությունների խթանման նպատակով յուրաքանչյուր շաբաթ ֆինանսական շուկաների ամփոփ ակնարկի պատրաստում և տրամադրում ATP հարթակին բաժանորդագրված անձանց,
- ATP առևտրային հարթակի հավելվածի հայալեզու տարբերակի մշակում և գործարկում,
- Միջազգային գործընկերոջ աջակցությամբ միջազգային շուկայից հաճախորդների համար արժեթղթերի ձեռքբերում,
- Բանկում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից մատուցվող ռեեստրավարման և պահառուական (ԲՌՊ) ծառայությունների միջնորդավորման գործունեության իրականացման և Արժեթղթերի պահառության իրականացման ընթացակարգերի վերանայում և հաճախորդներին մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացում,
- Տեղական և միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման պայմանների բարելավում: Միջազգային շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակում ոչ բավարար ծածկույթով (լևերիջով) գործարքների կնքման հնարավորությունների տրամադրում, լևերիջի մրցունակ շեմերի սահմանում, բրոքերային ծառայություններին կից հաճախորդներին մատուցվող հարակից ծառայությունների մատուցում՝ ըստ առանձնացված պրոֆեսիոնալ (Ստանդարտ և VIP) և ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների,
- Կապիտալի շուկայում գործառնությունների մասով Բանկի կողմից լրացուցիչ 4 տրանշի պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացի կազմակերպում, ինչպես նաև երկու վարկային կազմակերպության պատվերով պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման կազմակերպում:

ՄԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

Հաճախորդների գոհունակությունը Բանկի առաջնային նպատակներից է՝ հիմնված մարդակենտրոն սպասարկման, բանկային պրոդուկտների բազմազանության, մրցունակ սակագների, գործընկերության և պատասխանատվության վրա: Այս համատեքստում Բանկը սպասարկող անձնակազմին դիտարկում է որպես բանկ-հաճախորդ համակարգի կարևորագույն ներկայացուցիչ, ինչպես նաև բանկային ծառայությունների վաճառք իրականացնող առաջնային օղակ: Ուստի, սպասարկող անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունն ու հաճախորդների հետ հաղորդակցվելու և վաճառքը արագ ու գրագետ իրականացնելու հմտությունները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում:

Դեռևս 2020թ.-ին մեկնարկած վերաբրենդավորման գործընթացին զուգահեռ 2021-2023թ.-ին Բանկը փորձել է նաև նորովի ձևակերպել Բանկի հիմնարար արժեքները, որոնք կհանդիսանան հիմնասյուներ նոր կորպորատիվ մշակույթի ձևավորման համար և կնպաստեն հաճախորդների նկատմամբ մոտեցումների փոփոխությանը՝ հաճախորդակենտրոն սկզբունքների ձևավորմանը և նրանց բավարարվածության ու լոյալության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը:

Կարևորելով սպասարկող անձնակազմի պրոֆեսիոնալիզմը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը և համալիր ծառայությունների մատուցումը՝ Բանկը շարունակաբար իրականացնում է համապատասխան քայլեր հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգի զարգացման ուղղությամբ: Այս հանգամանքը կարևորվում է նաև՝ ելնելով ռազմավարության հիմքում դրված ինտենսիվ աճի և խաչաձև վաճառքներ իրականացնելու սկզբունքից:

Մարտահրավերներով ու խնդիրներով լի հաշվետու տարին հաճախորդների հավատարմության մակարդակի պահպանման լավագույն ցուցիչն է: Զգուշավոր և գրագետ քաղաքականության արդյունքում Բանկին հաջողվել է ապահովել վերջին մեկ տարվա ընթացքում ակտիվ հաճախորդների թվաքանակի 20.2% աճ, որտեղ ֆիզիկական անձանց բաժին է ընկել 94.8%, իրավաբանական անձ հաճախորդներին՝ 5.2%: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա ընթացքում առցանց տիրույթում անկանխիկ գործարքների քանակի ավելացումը փաստում է նաև AraratMobile բջջային հավելվածի արդյունավետության մասին:

Թեժ մրցակցության պայմաններում 2023թ.-ին Բանկը պահպանել է իր հաճախորդների կայուն բազան և 2022թ.-ի համեմատ ավելացրել հաճախորդների թիվը:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31.12.2023



31.12.2022



Իրավաբանական անձինք

Ֆիզիկական անձինք

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Ներքին հսկողական համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է: Ներքին հսկողական համակարգն ուղղված է ապահովելու և զարգացնելու Բանկի գործունեության արդյունավետությունը, աջակցելու Բանկին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ապահովման, ինչպես նաև թվային փոխակերպման գործընթացների գնահատման ու շարունակական բարելավման միջոցով:

Բանկում ներդրվել և շարունակաբար կատարելագործվում է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, այդ թվում՝ ռիսկերի գնահատման վրա հիմնված Բանկի ներքին աուդիտի, ներառյալ SS աուդիտի, աշխատանքների պլանավորման, ստուգումների իրականացման և հետստուգումային հսկողության գործառույթ:
Ներքին աուդիտի գործառույթը, որը ներդրվել է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան, ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով Ներքին աուդիտի կողմից աշխատանքային ծրագրերի կազմման գործընթացում հիմնականում ստուգումների շեշտը դրվում է Բանկի կողմից իրականացվող գործարար գործընթացների, SS համակարգերի, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման և ռիսկերի բացահայտման վրա:
Ստուգումների և գնահատումների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով Ներքին աուդիտի առաջարկությունների և եզրակացությունների հիման վրա ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված Բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի ներքին հսկողական համակարգը գործում է շուկայում արդի զարգացող պահանջներին համահունչ: Համապատասխանության ապահովման խումբը օժանդակում է գործարար գործընթացների իրականացմանը օրենսդրության, նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև նպաստում է էթիկական կորպորատիվ մշակույթի պահպանմանը՝ պարբերաբար կազմակերպելով Բանկի կորպորատիվ արժեքները ներկայացնող վարքագծի կանոնների, ինչպես նաև մեծ պատասխանատվություն կրող աշխատակիցների համար հիմնական իրավական և վերահսկողական պարտավորությունների վերաբերյալ սեմինարներ:

Իրականացվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ ԿԲ կանոնակարգող ակտերի և Բանկի գործառույթների քարտեզագրում և գնահատում, որի նպատակն է դրանց հետագա ավտոմատացումը:

Առկա գործընթացների ռիսկերի նվազեցման, արդիականացման և բարելավման նպատակով իրականացվում են գործառնությունների ընթացիկ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Ուսումնասիրվել է Ներքին դիտարկումների գործընթացը, առաջարկվել են որոշ գործառույթների ավտոմատացման հետ կապված մեխանիզմներ:

Համապատասխանության ապահովման խմբի կողմից ակտիվ համագործակցություն է իրականացվում բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Համապատասխանության ապահովման խումբը մասնակցում է գործառնական ռիսկերի կառավարման գործառույթներին և քննարկումներին, ներկայացնում համապատասխան լուծումների առաջարկություններ: Այն հնարավորություն է տալիս ընթացքում բացահայտել, գնահատել առկա խնդիրները և մշակել անհրաժեշտ լուծումներ, որոնք ուղղված են գործող մեխանիզմների բարելավմանը և ընթացիկ հսկողության մեխանիզմների անընդհատության սկզբունքով գործունեության ապահովմանը:

Ներքին իրավական ակտերը ուսումնասիրվում են ըստ առանձին գործառնությունների ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև տրվում են օպտիմալացման առաջարկություններ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Վերջին ժամանակներում բանկն առերեսվել է ինչպես արտաքին միջավայրից եկող, այնպես էլ ՀՀ տնտեսությունում և բանկային համակարգում առկա բազում մարտահրավերների հետ: Բանկը կարողացել է անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակում պահպանել իր մրցակցային առավելությունները և նախորդ տարվա ընթացքում ապահովել շահույթի բարձր մակարդակ: Ենթադրվում է, որ կպահպանվի առկա աշխարհաքաղաքական վիճակը և դրանից բխող ֆինանսական շուկաների անկայունությունը, իսկ առաջիկա տարիներին սպասվող ռիսկերին դիմակայելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևողական և արդյունավետ աշխատանք բոլոր ռիսկերի կառավարման ուղղությամբ:

Բանկը պլանավորում է պահպանել իրացվելիության, գործառնական, վարկային և շուկայական ռիսկերի ցածր մակարդակը: Իրացվելիության ցանկալի մակարդակի պահպանման նպատակով և միաժամանակ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավվող միջոցների տոկոսադրույքների բարձրացման պատճառով Բանկը կշարունակի տեղական շուկայից ներգրավվող ժամկետային միջոցների կշռի բարձրացումը:

Իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից Բանկում ամենօրյա կտրվածքով իրականացվում է Բանկի կողմից սահմանված իրացվելիության ներքին ցուցանիշների հսկողություն: Ցուցանիշների խախտման դեպքում անմիջապես վերլուծվում են խախտման պատճառները և իրականացվում են համապատասխան միջոցառումներ խախտումները վերացնելու ուղղությամբ: Աշխարհաքաղաքական միջավայրի կտրուկ փոփոխությունների և ֆորսմաժորային իրավիճակների ժամանակ Բանկի կողմից իրականացվում են սթրես թեստեր՝ սպասվող հնարավոր կորուստները կանխատեսելու և դրանք նվազագույնի հասցնելու նպատակով:

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով, հաշվի առնելով տնտեսական բացասական զարգացումների և վարկային պորտֆելի որակի վատթարացման սպասումները, Բանկը կշարունակի վարել զգուշավոր վարկային քաղաքականություն, միաժամանակ, ուշադրության կենտրոնում պահելով գործող վարկային պորտֆելում առկա զգայուն վարկերը և ակտիվ միջոցներ ձեռնարկելով խոցելի ոլորտների վարկերի վերադարձման ուղղությամբ:

ՀՀ ֆինանսական համակարգի մրցակցությանը դիմակայելու, շուկայում կայուն դիրքեր պահպանելու և շահութաբերության ցուցանիշների բարելավման նպատակով Բանկը նախատեսում է ավելի արդյունավետ դարձնել վարկային ռիսկի կառավարման առկա քաղաքականությունը: Նախատեսվում է մշակել խոշոր կորպորատիվ վարկառուների ներքին վարկանիշային գնահատման համակարգ՝ սահմանելով վարկառու իրավաբանական անձանց անվճարունակության ռիսկի քանակական և փորձագիտական գնահատականների միագումար գնահատման մեթոդաբանությունը:

Նախորդ տարի Բանկի կողմից արդիականացվել է «Ֆինանսական գործիքներ» ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 9-ին համապատասխան ֆինանսական ակտիվների դասակարգման մեթոդաբանությունը: Բանկն այս տարի ևս նախատեսում է իրականացնել նշված մեթոդաբանության կատարելագործմանն ուղղված աշխատանքներ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Անգրավ ՓՄՁ վարկավորման շուկայում մրցակցային դիրքեր գրավելու և անգրավ ՓՄՁ վարկերի պորտֆելը մեծացնելու նպատակով՝ Բանկն իրականացնում է NASIRA ծրագիրը: Այս ծրագիրը դրական է ազդում Բանկի համբավի վրա: Բանկը այս տարի ևս նախատեսում է շարունակել NASIRA ծրագիրը, միաժամանակ մշակել նոր սքորինգային համակարգ՝ խթանելով անգրավ համեմատաբար բարձր եկամտաբերությամբ ՓՄՁ վարկերի պորտֆելի աճը:

Բանկի ռիսկի ախորժակով առաջին մակարդակի ցուցանիշներով սահմանված է Բանկի նպատակային ռիսկի պրոֆիլը, որն իրենից ներկայացնում է ներքին սահմանաչափերի համակարգ, որն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում սկզբնական փուլում հսկողություն իրականացնել Բանկի ռիսկի ախորժակի պահպանման նկատմամբ՝ միաժամանակ չխոչընդոտելով Բանկի գործունեության բնականոն ընթացքին և ակտիվների արդյունավետ կառավարմանը: Բանկի գործող ռիսկի ախորժակն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական ուղենիշները՝

- Բանկի կողմից ընդունված ռիսկի մեծությունը չպետք է հասնի այնպիսի մակարդակի, որ հանգեցնի Բանկի գործունեության դադարեցմանը՝ այդ թվում շոկային իրավիճակներում:
- Անկանխատեսելի կորուստների դեպքում Բանկի կապիտալի մեծությունը պետք է բավարարի Բանկի վարկատու գործընկերների պահանջները:
- Բանկի կողմից իրականացվող գործառնությունների դեպքում դրամական հոսքերի կառուցվածքը և իրացվելիության բուֆերները պետք է երաշխավորեն հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ժամանակին կատարումը՝ երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածներում: Այդ նպատակով Բանկը սահմանել է իրացվելիության գծով մի շարք ցուցանիշներ, որոնք վերահսկվում են օրական, ամսական և եռամսյակային կտրվածքով:
- Բանկի ակտիվների և պարտավորությունների գործող կառուցվածքը ապահովում է Բանկի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և համապատասխանում է Բանկի բիզնես մոդելին:
- Իր գործունեության ընթացքում Բանկը ձգտում է խուսափել կենտրոնացումներից՝ սահմանելով կենտրոնացումների թույլատրելի սահմանաչափեր:
- Բանկը վարկային պորտֆելի կառավարման նպատակով սահմանել է վարկային պորտֆելի ռիսկի զսպման մի շարք ցուցանիշներ՝ հաշվի առնելով Բանկի վարկային ռիսկի պրոֆիլը, ռազմավարությունը և շուկայում ակնկալվող փոփոխությունները:
- Բանկն ապահովում է կայուն զարգացում և արդյունավետ գործունեություն երկարաժամկետ հորիզոնում:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

- **Բանկը պատշաճ կերպով ապահովում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջները:**
- **Իր գործունեության ընթացքում պահպանում է բարի համբավ՝ խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կվնասեն իր գործարար համբավին:**

Շուկայական ռիսկերի կառավարման տեսանկյունից Բանկում իրականացվում է տոկոսադրույքի և արտարժութային ռիսկերի կառավարում: Նշված ռիսկերի բացահայտման, գնահատման նպատակով Բանկում իրականացվում են զգայունության վերլուծություններ, արտարժութային դիրքերի հաշվարկներ, սթրես թեստեր: Բանկը նախատեսում է առաջիկա տարում ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և կատարելագործել շուկայական ռիսկերի կառավարման համար կիրառվող մոդելները:

Գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով յուրաքանչյուր շաբաթ իրականացվում է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից Գործառնական ռիսկերի կառավարման էլեկտրոնային շտեմարանի միջոցով գրանցված միջադեպերի վերլուծություն: Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողովի՝ յուրաքանչյուր շաբաթ տեղի ունեցող նիստերի ժամանակ տրվում են հանձնարարականներ համապատասխան ստորաբաժանումներին խնդիրների լուծման և գործառնական ռիսկերի նվազեցման նպատակով: Յուրաքանչյուր եռամսյակ իրականացվում է նաև գործառնական ռիսկի հաշվարկ:Ռիսկերի կառավարման գործընթացներն իրականացվում են Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակի քաղաքականությանը համաձայն և գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում: Բանկում մշտապես ուսումնասիրվում և կիրառվում է միջազգային փորձը՝ բարձրացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ նպատակ ունենալով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ մակարդակը և նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:

AraratBank

0002, ք. Երևան

Բուզանդի 87 շ., 85 տ.

+ 374 10 59 23 23

info@araratbank.am

www.araratbank.am

ANDROID APP ON Google play

Download on the App Store